ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅՏԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԽՕՍՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Հայրական ջերմ սիրով և Հայրապետական բարձր գնահատանքի զգացումներով ողջունում ենք Ձեզ՝ Ձեր կեանքի 60-ամեայ հանգրուանին:

Մեր ժողովրդի քրիստոնէական ծննդավայրից՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բի՛ւր օրհնութիւն Ձեր և Ձեր հոգևորական սպասաւորութեան վրայ:

Դուք այս հոգևոր կեդրոնում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կազմաւորուեցիք որպէս Աստուծոյ, Եկեղեցու և հայ ժողովրդի սպասաւոր: Առաջին իսկ տարիներից Դուք յայտնաբերել էք հաւատարմութեան և անսակարկ ծառայութեան ոգի: Եղաք Հայ Եկեղեցու աւանդութեան քատագով և նախանձախնդիր մի հոգևորական, որ գիտցաւ Եկեղեցին վեր դասել ամէն տեսակի անձնական նկատառումից և փառասիրութիւնից: Ձեր համեստութիւնը եղաւ Ձեր լաւագոյն արժանիքներից մէկը:

Վրաստանի տարածքում Դուք ցուցաբերեցիք անվերապահ ծառայութեան ոգի՝ միշտ լինելով քարոզիչը խաղաղութեան, համերաշխութեան և միութեան: Բարձրագոյն աստիճանի վրայ պահեցիք Ձեր յարաբերութիւնները Վրաց Օրթոտոքս Եկեղեցու պետի և այլ եկեղեցականների հետ, ինչպէս նաև Վրացական Հանրապետութեան պատասխանատու անձնաւորութիւնների և շրջանակների հետ:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի պարգևի քաջառողջ կեանք, որպէսզի կարողանաք դեռևս երկար տարիներ Ձեր ծառայութիւնը մատուցել մեր Ս. Եկեղեցուն և պատուական հայ ժողովրդին:

Այս առիթով կոչ ենք անում նաև Վրաստանի մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովուրդին, որպէսզի նախանձախնդիր ոգով, իր կենդանի և արդիւնաշատ մասնակցութիւնը բերի մեր ազգային-եկեղեցական և կրթական-մշակութային կեանքի առաջադիմութեանը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօքն Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9 Սեպտեմբերի 1998
Ս. Էջմիածին